«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____»_____ 2024 ԹՎԱԿԱՆԻ N_____Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 201-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ *Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի **«Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփխությունը և լրացումները՝**

- որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում «։» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել նոր 8-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«8) Միասնական սոցիալական ծառայության քաղաքացիական աշխատանք կատարող անձի ֆունկցիոնալությունը գնահատող մասնագետների գործավարձի չափը՝ համաձայն N 8 հավելվածի։».

- որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «արտադրյալով» բառից հետո լրացնել «, իսկ Միասնական սոցիալական ծառայության քաղաքացիական աշխատանք կատարող անձի ֆունկցիոնալությունը գնահատող մասնագետների համար պաշտոնային դրույքաչափը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափի և սույն որոշման N 8 հավելվածով սահմանված գործավարձի գումարման միջոցով» բառերով.

- որոշումը լրացնել նոր N 8 հավելվածով՝ համաձայն հավելվածի։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» N 201-Ն որոշման N 1 հավելվածի

- N 1 ցանկի IV բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«IV. Անձանց ֆունկցիոնալության գնահատում իրականացնող իրավասու պետական մարմիններ

Բժիշկներ, հարբժշկական ծառայություն մատուցող մասնագետներ	անձի ֆունկցիոնալության գնահատման ենթարկվող անձանց հետ անմիջականորեն կատարվող աշխատանք»

- N 3 ցանկի I բաժնի 1-ին սյունակից հանել «տուբերկուլոզով հիվանդ քաղաքացիներին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի բժիշկներ,» բառերը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից։

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

Սեպտեմբերի ——-ի N -Ն որոշման

«Հավելված N 8

ՀՀ կառավարության 2018 թվականի

հուլիսի 3-ի N 737-Ն որոշման

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԼՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ

NN
ը/կ

1.